ԿԱՐԾԻՔ

Կարլեն Վաղարշակի Ոսկանյանի ԺԹ. 00. 01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Անձի տնտեսական վարքի մոդելավորման հոգեբանական օրինաչափությունները» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Գիտական գրականության մեջ տնտեսական վարքը սահմանվում է որպես սոցիալական վարքի մի այնպիսի տեսակ, որն անձը դրսևորում է տնտեսական գործունեություն իրականացնելիս: Որպես գործողությունների համակարգ, այն արտացոլում է հասարակության տնտեսական կյանքին անձի մասնակցության ձևերն ու առանձնահատկությունները և պայմանավորվում տնտեսական գործունեության ընթացքում անձի կողմից տնտեսական ընտրություն կատարելու դրդապատճառներով:

Միջգիտակարգային ժամանակակից հետազոտություններում մեծ տեղ է հատկացվում անձի՝ որպես տնտեսական սուբյեկտի վարքին և դրա մոդելավորմանը նվիրված հետազոտություններին: Տարբեր մեթոդների գործադրմամբ կառուցվում են անձի տնտեսական վարքի տարատեսակ մոդելներ, հաշվարկվում նրա արդյունավետության ցուցանիշները: Այս համատեքստում հոգեբանական գիտության մեջ արդիական են դարձել այնպիսի հիմնախնդիրների լուծումները, որոնցում անձի անհատական և էթնոհոգեբանական առանձնահատկությունները հանդես են գալիս որպես նրա տնտեսական վարքի վրա ազդող գործոններ: Կարևոր գործնական նշանակություն են ձեռք բերում այնպիսի հետազոտությունները, որոնք նվիրված են անձի տնտեսական վարքը պայմանավորող ոչ միայն տնտեսագիտական, այլև հոգեբանական օրինաչափությունների բացահայտմանը: Հենց այս հիմնախնդրի լուծմանն է նվիրված Կարլեն Վաղարշակի Ոսկանյանի ԺԹ. 00. 01- «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ

հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Անձի տնտեսական վարքի մոդելավորման հոգեբանական օրինաչափությունները» խորագրով ատենախոսությունը:

Պաշտպանության ներկայացված ատենախոսությունը, որի ծավալը կազմում է 144 համակարգչային էջ, բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից, գործնական առաջարկներից, 182 անուն գրականության ցանկից: Ատենախոսություն ունի նաև հավելված՝ 12 էջ ընդհանուր ծավալով:

Ատենախոսության ներածական մասում հիմնավորված է թեմայի արդիականությունը, ձևակերպված են հետազոտության նպատակը, օբյեկտը և առարկան, խնդիրները, առաջադրված է հետազոտության վարկածը, համաձայն որի անձի տնտեսական վարքի վրա ազդող հոգեբանական գործոնները համարելով իրավիճակային փոփոխականներ, տնտեսական վարքի հիմքում պետք է դիտարկել գործառնական-դինամիկ արդյունավետության սկզբունքը: Ներկայացված են հետազոտության մեթոդաբանական հիմքերը և մեթոդները:

Ատենախոսության առաջին գլխում *(Տնտեսական վարքի մոդելավորման հիմնախնդրի հայեցակարգային վերլուծություն)*, որը բաղկացած է 4 ենթագլխից, հիմնավորվում է անձի տնտեսական վարքի միջգիտակարգային հետազոտության անհրաժեշտությունը, ինչը ըստ ատենախոսության հեղինակի պայմանավորվում է նրանով, որ անձի տնտեսական վարքին առնչվող շատ խնդիրների լուծումներ, որոնք իրականացվում են տնտեսագիտական նորմատիվային մոտեցմամբ՝ ֆինանսական ցուցանիշներից ելնելով, չեն բավարարում ներկայիս հասարակությունների պահանջները, ինչի հետևանքով անձի տնտեսական վարքի դրսևորումները այսօր դարձել են անկանխատեսելի և չեն ենթարկվում տնտեսագիտական հաշվարկային ալգորիթմներին: Գիտական վերլուծություններից ելնելով, հեղինակը հիմնավորում է իր այն մոտեցումը, որ անձի տնտեսական վարքը պետք է հետազոտել բազմագործոն ազդեցությունների համատեքստում, որում ներառված են ինչպես անձի անհատական հոգեբանական, այնպես էլ սոցիալ-հոգեբանական գործոններով պայմանավորված առանձնահատկությունները: Առաջին գլխում տրվում է «տնտեսական մարդ» եզրույթի տնտեսագիտական և հոգեբանական մեկնաբանությունը, իրականացվում

անձի տնտեսական վարքը պայմանավորող հոգեբանական գործոնների դասակարգում: Ներկայացված են տնտեսական ընտրության առանձնահատկությունները, նրա արդյունավետության խնդիրը, ընտրանքը պայմանավորող հոգեբանական նախապայմանները: Տնտեսական ընտրանքը դիտարկված է տնտեսագիտական և հոգեբանական տեսանկյուններից:

Ատենախոսության երկրորդ գլխում (*Հոգեբանական գործոններով պայմանավորված տնտեսական վարքի մոդելավորման առանձնահատկությունները*) անդրադարձ է կատարված տնտեսական վարքի հոգեբանական հետազոտություններում մաթեմատիկական մեթոդների և մոդելների կիրառությանը, հիմնավորվում է հոգեբանության մեջ մաթեմատիկական մեթոդների կիրառության անհրաժեշտության հարցը: Պարզաբանված են տնտեսական վարքի մոդելավորման գործընթացում որպես փորձարարական հետազոտության միջոց գործածվող $[(x_1, p_1);(x_2, p_2);...;(x_n, p_n)]$ «ռիսկային հեռանկար» (կամ «վիճակախաղ») և $U(\bar{x}) = \sum_{i=1}^{n} u(x_i) p_i$ «ակնկալվող օգտակարության ֆունկցիա» մաթեմատիկական հասկացությունները, որոնց միջոցով հաշվարկում են տնտեսական վարքի մոդելների վիճակագրական թվային բնութագրիչները: Վերլուծված են անձի տնտեսական ընտրանքների և տնտեսական վարքի արդյունավետության հարցում տնտեսագիտական և հոգեբանական մի շարք տեսություններում (նեոդասական, ինստիտուցիոնալ, էվոլյուցիոն, Նեյման-Մորգենշտերնի ակնկալվող օգտակարության, Հ. Սայմոնի սահմանափակ արդյունավետության, Կահնեման-Տվերսկու հեռանկարների տեսություններում) ընդունված մեթոդաբանական մոտեցումները և դրանց առանձնահատկությունները:

Ատենախոսության երրորդ գլուխը *(Անձի տնտեսական վարքի հոգեբանական գործոններով պայմանավորված օրինաչափությունների հետազոտություն)* նվիրված է հետազոտության մեթոդաբանությանը, ռազմավարությանը, հարցարանների տեղայնացմանը, փորձարկման փուլերին, հետազոտական համակազմին, էմպիրիկական հետազոտության նկարագրությանը, էմպիրիկական հետազոտության փուլերի արդյունքների վերլուծությանը: Որպես հետազոտության իրականացման ռազմավարական ելակետ ընդունվել է ապրանքների և ծառայությունների վրա կատարավող ծախսերի նվազեցման տնտեսագիտական դրույթը:

Հոգեբանական գործոնները դիտարկվել են որպես իրավիճակային փոփոխականներ. անձի տնտեսական վարքի օրինաչափությունների բացահայտմանը միտված փորձարկումների ռազմավարական ուղղությունը եղել է անձի հոգեբանական առանձնահատկություններով պայմանավորված գործոնների ազդեցության բացահայտումը: Փորձարարական հետազոտություններն իրականացվել են գիտական ճշգրտությամբ, ինչի արդյունքում ապացուցվել է, որ.

- Տարբեր իրադրություններում անձի անհատական հոգեբանական և սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցության հարաբերակցությունը փոփոխության է ենթարկվում, ինչի հետևանքով անձի տնտեսական վարքի արդյունավետության հաշվարկման տնտեսագիտական չափանիշները չեն գործում: Հետևաբար անձի տնտեսական վարքը մոդելավորելիս անձնային հոգեբանական առանձնահատկությունները և սոցիալ-հոգեբանական գործոնները պետք է դիտարկել որպես իրավիճակային փոփոխականներ:
- Անձն իր տնտեսական ընտրությունը կատարվում է իրավիճակային դետերմինիզմի սկզբունքով՝ սոցիալ-հոգեբանական գործոնների ազդեցության ներքո, ինչի հետևանքով անձի տնտեսական նախասիրությունները և անհատական հոգեբանական առանձնահատկությունները նրա տնտեսական վարքի վրա երկրորդական դերակատարություն են ունենում:
- Հավասարարժեք ֆինանսական ելքերով ընտրանքային իրադրություններում անձը ցուցաբերում է պարզեցված ինտուիտիվ մոտեցում, ինչը և հանգեցնում է նրա տնտեսական վարքի իռացիոնալ դրսևորումների:

Փորձարարական ճանապարհով բացահայտվել են անձի տնտեսական վարքին բնորոշ այն հիմնական օրինաչափությունները, որոնք պայմանավորվում են անձի հոգեբանական առանձնահատկություններով և սոցիալ-հոգեբանական գործոններով: Կառուցվել է անձնային հոգեբանական և սոցիալ-հոգեբանական գործոններով պայմանավորված տնտեսական վարքի իրադրական մոդել, որը կարող է որպես ենթամոդել օգտագործվել տնտեսական վարքի համահասարակական ընդհանրական մոդելների կառուցման գործընթացում:

Կարլեն Վաղարշակի Ոսկանյանի ատենախոսությունը ավարտուն գիտական աշխատանք է՝ շարադրված գրագետ գիտական լեզվով և ոճով: Այն ունի ոչ միայն գիտատեսական, այլև գործնական նշանակություն և կարող է հիմք հանդիսանալ անձի տնտեսական վարքի հիմնախնդիրներով զբաղվող հետազոտողների համար: Հետազոտության արդյունքները հավաստի են: Հեղինակի հրատարակած հոդվածները լիովին արտացոլում են հետազոտված հիմնախնդիրը, ատենախոսության սեղմագիրն ամբողջությամբ արտացոլում է ատենախոսության բովանդակությունը:

Անդրադառնանք մեր կողմից ատենախոսության մեջ նկատված որոշակի թերություններին և նկատառումներին:

1. Անհրաժեշտ է հիմնավորել հեղինակի կողմից առանձնացվող և չափվող գործոնների օբյեկտիվ նշանակաթյունը տնտեսական վարքի ուսումնասիրության վրա:
2. Թերի է հիմնավորված անձի տնտեսական վարքի ուսումնասիրման համար ընտրված մեթոդիկաները՝ մասնավորապես ինքնակարգավորման ոճի բացահայտման Վ. Մորոսոնովայի (ССПМ 98) և Շ. Շվարցի անձի արժեքային համակարգի ախտորոշման մեթոդիկաները:
3. Ցանկալի է հիմնավորել ընտրանքի սեռատարիքային և մասնագիտական բաշխվածությունը: Հատկապես բացատրել հեղինակի ենթադրությունը առ այն, որ ճշգրիտ գիտությունների ներկայացուցիչների մոտ կոգնիտիվ մոտեցմամբ ընտրության հակվածությունը պետք է ավելի ուժեղ դրսևորվի, քան հումանիտարների մոտ:
4. Ցանկալի է պարզաբանել հեղինակի կողմից իրականացված հետազոտության առաջին և երրորդ փորձարարական փուլերում պահանջմունքների Մասլոուի հիերարխիկ սխեմայի փորձարկվողների կողմից 5 պահանջմունքների դասակարգման փորձը՝ ըստ իրենց կողմից դրանց տրվող կարևորության, քանի որ անձնային պահանջմունքները տարբեր իրավիճակների և անձի հուզական վիճակի ազդեցության ներքո կարող են ակտուալ լինել կամ ոչ, կարող են չգիտակցվել կամ ոչ լիարժեք գիտակցվել և բացի այդ փորձարկվողներին կարող էր հասկանալի չլինել

օրինակ ինքնահրացման, ֆիզիոլոգիական կամ այլ պահանջմունքների բովանդակությունը:

Նշենք, որ նշված դիտողությունները և նկատառումները մասնավոր բնույթի են և ամենևին չեն անդրադառնում ատենախոսության գիտական արժեքի վրա:

Գտնում ենք, որ Կարլեն Վաղարշակի Ոսկանյանի ԺԹ. 00. 01 - «Ընդհանուր հոգեբանություն, հոգեբանության տեսություն և պատմություն, անձի հոգեբանություն» մասնագիտությամբ հոգեբանական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման «Անձի տնտեսական վարքի մոդելավորման հոգեբանական օրինաչափությունները» թեմայով ատենախոսությունը լիովին համապատասխանում է ՀՀ ԲՈԿ-ի գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին: Որպես ավարտուն գիտական աշխատանք այն իր բնույթով նորություն և հոգեբանության բնագավառում կարևոր նշանակություն ունեցող խնդրի լուծում է: Գտնում ենք, որ ատենախոսությոն հեղինակ Կարլեն Վաղարշակի Ոսկանյանը լիովին արժանի է իր հայցման գիտական աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս՝ հոգեբանական
գիտությունների թեկնածու, դոցենտ Էլինա Վյաչեսլավի Ասրիյան

Է. Վ. Ասրիյանի ստորագրությունը հաստատում եմ:
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար
բ.գ.թ. Մերի Հովհաննիսյան

26.05.2022թ